



Կարգապահական գործ թիվ ԿԳ-17030

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2017 թվականի սեպտեմբերի 28-ի թիվ 146-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ ԿԳ/88-Ա

**ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐ ԼԻԱՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ, ԿԱՐԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ԵՎ
ԿԱՐԵՆ ՂԱԶԱՐՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ
ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՅԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ նաև՝ Պալատ**) խորհուրդը (**այսուհետ նաև՝ խորհուրդ**), նիստը նախագահող՝ Կարեն Սարգսյանի, **խորհրդի անդամներ՝** Կարապետ Աղաջանյանի, Մելանյա Առուստամյանի, Սեդրակ Ասատրյանի, Սիմոն Բաբայանի, Հարություն Հարությունյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Նոնա Համբարձումյանի,

28.09.2017թ-ին Երևան քաղաքում քննության առնելով փաստաբաններ Լիանա Գրիգորյանին (փաստաբանական գործունեության արտոնագիր № 892), Կարեն Հովհաննիսյանին (փաստաբանական գործունեության արտոնագիր № 1352) և Կարեն Ղազարյանին (փաստաբանական գործունեության արտոնագիր № 1358) (**այսուհետ նաև՝ Պատասխանողներ**), կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքերը.

Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի (**այսուհետ նաև՝ Դիմող**) կողմից (նախագահող դատավոր Վ. Մարգարյան) Պալատ է ուղղվել Դիմողի կողմից 11.05.2017թ-ին կայացված «Դատական սանկցիա կիրառելու մասին» որոշումը (**այսուհետ նաև՝ Որոշում**):

Որոշման համաձայն Դիմողի վարույթում քննվող թիվ ԵՇԴ/0165/01/16 քրեական գործով փաստաբաններ Լիանա Գրիգորյանը, Կարեն Հովհաննիսյանը և Կարեն Ղազարյանը հանդիսանում են ամբաստանյալներից Իշխան Արամայիսի Բարսեղյանի պաշտպաններ: Նրանց հետ միասին վերջինիս պաշտպանությունը իրականացնում են փաստաբաններ Վարդուիի Էլբակյանը, Վլադիմիր Գրիգորյանը և Արայիկ Ղազարյանը:

2017թ-ի մայիսի 11-ին ժամը 15:00-ին նշանակված դատական նիստի օրվա և ժամի մասին լինելով նախապես պատշաճ ծանուցված /քանի որ ներկա են գտնվել նախորդ դատական նիստին/, փաստաբաններ Լիանա Գրիգորյանը, Կարեն Հովհաննիսյանը և Կարեն Ղազարյանը չեն ներկայացել դատական նիստին՝ իրենց չներկայանալու մասին դատական նիստից առաջ գրավոր տեղեկացնելով և չներկայացնելով հարգելի պատճառներ: Փաստաբանների նման վարքագիծը քննարկելով՝ դատարանը եկել է այն եզրահանգման, որ հիշյալ փաստաբանները, ըստ էության, իրենց դատավարական իրավունքներից օգտվել են անբարեխղճորեն և անհարգելի չեն կատարել իրենց դատավարական պարտականությունները՝ չարամտորեն խուսափելով դատարան ներկայանալուց, ինչով ձախողել են գործի քննությունը՝ դրանով իսկ անհարգալից վերաբերմունք դրսևորելով դատարանի և դատավարության մասնակիցների նկատմամբ:

Որոշմամբ Դատարանը նշել է նաև, որ պաշտպաններ Լիանա Գրիգորյանը, Կարեն Հովհաննիսյանը և Կարեն Ղազարյանը, գիտակցելով, որ դատարանը կարող էր դատական նիստը անցկացնել թեկուզ մեկ պաշտպանի մասնակցությամբ, ըստ էության, նախնական համաձայնության գալով միմյանց հետ, մեկ միասնական դիմում են ներկայացրել դատական նիստը հետաձգելու մասին, այսինքն՝ նրանց գործողությունները Դատարանին թույլ են տվել գալ այն եզրահանգման, որ վերջիններս նպատակ են հետապնդել ձախողել քրեական գործի դատական քննությունը՝ գիտակցելով, որ պաշտպանների բացակայության պայմաններում քրեական գործի քննությունը չի կարող ընթանալ:

Վերոգրյալի հիման վրա Դատարանը որոշել է. «Թիվ ԵՇԴ/0165/01/16 քրեական գործով ամբաստանյալ Իշխան Արամայիսի Բարսեղյանի պաշտպաններ, փաստաբաններ Լիանա Գրիգորյանի, Կարեն Հովհաննիսյանի և Կարեն Ղազարյանի նկատմամբ կիրառել դատական սանկցիա, այն է՝ դիմել ՀՀ փաստաբանների պալատ՝ վերջիններիս պատասխանատվության ենթարկելու համար»:

2. Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահի 05.06.2017թ. թիվ 146-Ա/ԿԳ-17030 որոշմամբ՝ փաստաբաններ Լիանա Գրիգորյանի (արտոնագիր թիվ 892), Կարեն Հովհաննիսյանի (արտոնագիր թիվ 1352) և Կարեն Ղազարյանի (արտոնագիր թիվ 1358) նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ՝ Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի (**այսուհետ՝ Կանոնագրքի**) 4.1 կետի պահանջների խախտման հատկանիշներով:

09.06.2017թ-ին կարգապահական գործը հանձնվել է նախապատրաստող անձ Ստեփան Ոսկանյանին:

3. Դիմողի և Պատասխանողի համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.

3.1. Դիմողի համառոտ բացատրությունը.

Սույն կարգապահական գործի նախապատրաստման փուլում Դիմողը բացատրություն չի ներկայացրել, և չի ներկայացել սույն կարգապահական գործի քննության համար նշանակված կարգապահական նիստին, թեև պատշաճ ծանուցված է եղել դրա օրվա, ժամի և վայրի մասին:

3.2. Պատասխանողների համառոտ բացատրությունը.

Իր նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հարցը քննարկելու մասին Պալատի նախագահի՝ 05.06.2017թ-ի թիվ 146-Ա/ԿԳ-17030 որոշման կապակցությամբ Պատասխանող Կարեն Հովհաննիսյանը ներկայացրել է գրավոր բացատրություն, հետևյալի մասին՝

«Ես՝ Կարեն Հենրիկի Հովհաննիսյանս, Շենգավիթ վարչական շրջանի դատարանի վարույթում քննվող թիվ ԵՇԴ/0165/01/16 քրեական գործով, ըստ մեղադրանքի Իշխան Բարսեղյանի, ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետով և մյուսի, ներգրավված եմ որպես ամբաստանյալ Ի. Բարսեղյանի պաշտպան: Նույն քրեական գործի դատաքննությամբ որպես Ի. Բարսեղյանի պաշտպաններ ներգրավված են նաև ՀՀ փաստաբանների պալատի փաստաբաններ Վարդուհի Էլբակյանը, Կարեն Ղազարյանը, Վլադիմիր Գրիգորյանը, Արա Ղազարյանը, Լիանա Գրիգորյանը:

Սույն քրեական գործով հերթական դատական նիստը նշանակվել է 2017թ-ի մայիսի 11-ին, ժամը 15:00-ին: Հիշյալ օրն՝ ունենալով անձնական բնույթի զբաղվածություն, չէի կարող ներկայանալ դատական նիստին, ինչի կապակցությամբ նախապես տեղեկացրել եմ գործընկերներիս: Արդյունքում պարզվեց, որ աշխատանքային այլ զբաղվածության պատճառով նշված օրը և ժամին նշանակված դատական նիստին չեն կարող ներկայանալ նաև Կարեն Ղազարյանը, Լիանա Գրիգորյանը, իսկ փաստաբան Վարդուհի Էլբակյանը 10.05.2017թ-ին վիրահատվել էր և գտնվում էր ստացիոնար բուժման մեջ <<Էրեբունի>> ԲԿ-ում: Ինչ վերաբերում է փաստաբաններ Վլադիմիր Գրիգորյանին և Արա Ղազարյանին, վերջիններս 05.05.2017թ-ի դատական նիստին ներկա չլինելու պատճառով ծանուցված չեն եղել հաջորդ դատական նիստի օրվա և ժամի մասին: 2017թ-ի մայիսի 11-ին, ժամը 15:00-ին կայանալիք դատական նիստին ներկայանալու անհնարինության պայմաններում ես, փաստաբաններ Լիանա Գրիգորյանը, Կարեն Ղազարյանը ձևակերպեցինք համանուն դիմում՝ խնդրանքով մեր բացակայությունը համարել հարգելի՝ հայցելով դատարանի և դատավարության մասնակիցների ներողամտությունը:

Մինչդեռ, դատարանը՝ նախագահությամբ դատավոր Վ. Մարգարյանի, պաշտպաններ Կարեն Հովհաննիսյանիս, Լիանա Գրիգորյանի, Կարեն Ղազարյանի չներկայանալը դատական նիստին սուբյեկտիվորեն դիտարկելով որպես դատարան

ներկայանալուց չարամտորեն խուսափելու միտում, նույն օրը՝ 11.05.2017թ-ին որոշում է կայացրել թիվ ԵՇԴ/0165/01/16 քրեական գործով ամբաստանյալ Ի. Բարսեղյանի պաշտպաններ, փաստաբաններ Լիանա Գրիգորյանի, Կարեն Ղազարյանի, Կարեն Հովհաննիսյանի նկատմամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 314-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված սանկցիա կիրառելու մասին»:

Գտնելով, որ Դատարանի հիշյալ որոշումը՝ պատճառաբանական մասի բովանդակային տեքստով հիմնազուրկ է և չփարատված, իսկ կիրառված դատական սանկցիան ոչ իրավաչափ, Պատասխանողներից Կարեն Հովհաննիսյանը բացատրության մեջ մեջբերել է ՀՀ դատական օրենսգրքի 63-րդ և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 314.1-րդ հոդվածները՝ նշելով, որ դրանցում նշված իրավախախտումների էական տարբերությունների բացակայության պայմաններում, դրանց մեկնաբանության լույսի ներքո դատարանը հիշյալ որոշման պատճառաբանական մասում ներկայացրել է դատական նիստի կարգի խախտմանը վերաբերելի այնպիսի իրավիճակներ, որոնք փաստացի տեղի չեն ունեցել իրենց՝ պաշտպանների՝ որպես դատավարության մասնակիցների դատավարությանը չներկայանալու պայմաններում:

Այնուհետև, Պատասխանող Կարեն Հովհաննիսյանն իր բացատրության մեջ նշել է հետևյալը. «Դատարանի կողմից սխալ են մեկնաբանվել նշված իրավանորմերը, ավելի կոնկրետ, դատարանն անտեսել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 314.1-րդ հոդվածում տեղ գտած «կամ» բառի բովանդակային իմաստը, ինչպես նաև իրավաբանորեն սխալ մեկնաբանելով դատավարական պարտականությունները անհարգելի չկատարելու, դատարանի և դատավարության մասնակիցների նկատմամբ անհարգալից վերաբերմունքի դրսևորումները և դրանց իրավական հետևանքները՝ թույլ է տվել դատավարական և նյութական իրավունքի խախտում:

Բացի այդ, դատարան ներկայանալուց չարամտորեն խուսափելու ենթադրության դատարանը փաստորեն հանգել է բացառապես երեք պաշտպաններիս համանուն դիմումի առկայության պայմաններում, որպիսի դիրքորոշումն ուղղակի զավեշտալի է : Ավելին, նման որակման հիմնավորվածության համար դատարանն առնվազն պետք է դատական նիստով լսեր իմ, Լիանա Գրիգորյանի, Կարեն Ղազարյանի փաստարկումներն ու պատճառաբանությունները՝ 11.05.2017թ-ի դատական նիստին չներկայանալու անհնարինության վերաբերյալ, հետևաբար, դատարանի նշված որոշումը գնահատում եմ կանխակալ»:

Վերը նշված հիմնավորումներով Պատասխանող Կարեն Հովհաննիսյանը փաստել է, որ Շենգավիթ վարչական շրջանի դատարանի վարույթում քննվող թիվ ԵՇԴ/0165/01/16 քրեական գործով ամբաստանյալ Իշխան Բարսեղյանի պաշտպաններ Լիանա Գրիգորյանի, Կարեն Ղազարյանի և իր կողմից թույլ չի տրվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 314.1-րդ հոդվածով նախատեսված և ոչ մի իրավախախտում, որը կարող էր դատական սանկցիա կիրառելու հիմք հանդիսանար:

Սույն կարգապահական գործի քննության համար նշանակված կարգապահական նիստին Պատասխանող փաստաբաններից ներկայացել են Կարեն Հովհաննիսյանը և Կարեն Ղազարյանը: Փաստաբան Լիանա Գրիգորյանը չի ներկայացել, թեև պատշաճ ծանուցված է եղել նիստի օրվա, ժամի և վայրի մասին:

3.3. Վկաների ցուցմունքները.

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը Խորհրդին.

Կարգապահական գործը նախապատրաստող անձ Ստեփան Ոսկանյանը հավաքագրելով և ուսումնասիրելով գործին վերաբերող ապացույցները, կազմել է եզրակացություն, ըստ որի.

«(...) Վերոգրյալը հիման վրա, ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 27-րդ, 39.5-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Վարույթի կարգի 22-րդ կետը, ապացույցների հետազոտման և գնահատման արդյունքում, հաստատված համարելով սույն եզրակացության 7-րդ կետում նշված փաստերը, փաստաբաններ Լիանա Գրիգորյանի, Կարեն Հովհաննիսյանի և Կարեն Ղազարյանի վերաբերյալ Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 4.1 կետի /Վարվելակերպի կանոնները դափարանում/ պահանջների առերևույթ խախտման հատկանիշներով հարուցված կարգապահական վարույթի գործը համարում եմ ամբողջությամբ նախապատրաստված ՀՀ Փաստաբանների պալատի խորհրդում ներկայացնելու, ըստ էության քննելու և վերջնական որոշում կայացնելու համար»:

Եզրակացության վերաբերյալ առարկություններ չեն ներկայացվել:

09.08.2017թ. գործը հանձնվել է Խորհրդին: Խորհրդի նիստը տեղի է ունեցել 2017 թվականի սեպտեմբերի 28-ին, ժամը՝ 18:30-ին ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքիյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. Գործի փաստերը՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.

Կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» (այսուհետ՝ **Կարգ**) 22-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, Պալատի խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Պալատի խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Պալատի խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:

Խորհուրդը ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը՝

1. Դիմողի վարույթում քննվող թիվ ԵՇԴ/0165/01/16 քրեական գործով ըստ մեղադրանքի Իշխան Բարսեղյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետով և Էլզա Ջաքարյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 313-րդ հոդվածի 1-ին մասով, ամբաստանյալ Իշխան Բարսեղյանի շահերը դատարանում պաշտպանել են Պատասխանողները և փաստաբաններ Վարդուհի Էլբակյանը, Վլադիմիր Գրիգորյանը և Արայիկ Ղազարյանը, իսկ ամբաստանյալ Էլզա Ջաքարյանի շահերը դատարանում պաշտպանել են փաստաբաններ՝ Տիգրան Աթանեսյանը, Արմեն Սողոմոնյանը և Հովհաննես Չամսարյանը, *ինչը հաստատվում է Դիմողի «Դատական սանկցիա կիրառելու մասին» 11.05.2017թ-ի որոշմամբ և Պատասխանողներից Կարեն Հովհաննիսյանի բացատրությամբ:*

2. 28.04.2017թ-ին նշանակված դատական նիստին Պատասխանողները ներկայացել են, սակայն նիստը հետաձգվել է ամբաստանյալ Էլզա Ջաքարյանի պաշտպաններ Տիգրան Աթանեսյանի, Արմեն Սողոմոնյանի և Հովհաննես Չամսարյանի բացակայության պատճառով, ինչը հաստատվում է 11.05.2017թ-ի որոշմամբ, *ինչը հաստատվում է Դիմողի «Դատական սանկցիա կիրառելու մասին» 11.05.2017թ-ի որոշմամբ:*

3. 05.05.2017թ-ին նշանակված դատական նիստին Պատասխանողները ներկայացել են, սակայն նիստը հետաձգվել է՝ ամբաստանյալ Իշխան Բարսեղյանի ինքնազգացողության վատացման պատճառով: Միաժամանակ հաջորդ դատական նիստը նշանակվել է 2017թ-ի մայիսի 11-ին՝ ժամը 15:00-ին, որի մասին դատավարությանը ներկա գտնվող մասնակիցները, այդ թվում նաև՝ Պատասխանողները, ծանուցվել են դատական նիստում նախագահողի կողմից արված հայտարարությամբ, իսկ չներկայացած պաշտպաններ Վլադիմիր Գրիգորյանին և Արայիկ Ղազարյանին Դատարանի կողմից փոստով ուղարկվել է համապատասխան ծանուցում՝ 11.05.2017թ-ին նշանակված դատական նիստի տեղի և ժամի մասին, *ինչը հաստատվում է Դիմողի «Դատական սանկցիա կիրառելու մասին» 11.05.2017թ-ի որոշմամբ:*

4. 2017թ-ի մայիսի 11-ին՝ ժամը 15:00-ին նշանակված դատական նիստին ներկայացել են ամբաստանյալներ Իշխան Բարսեղյանը, Էլզա Ջաքարյանը և վերջինիս պաշտպաններ Տիգրան Աթանեսյանն ու Հովհաննես Չամսարյանը, ինչպես նաև վկաներ Նորիկ Հակոբյանը, Կիմա Սարյանը, Լուսինե Բաղդասարյանն ու Նաիրա Բաղդասարյանը: Դատական նիստին չեն ներկայացել պատշաճ կարգով ծանուցված պաշտպաններ Վարդուհի Էլբակյանը, Լիանա Գրիգորյանը, Կարեն Հովհաննիսյանը և Կարեն Ղազարյանը, ինչպես նաև ամբաստանյալ Էլզա Ջաքարյանի պաշտպան Արմեն Սողոմոնյանը, *ինչը հաստատվում է Դիմողի «Դատական սանկցիա կիրառելու մասին» 11.05.2017թ-ի որոշմամբ և Պատասխանողներից Կարեն Հովհաննիսյանի բացատրությամբ:*

5. Պաշտպաններ Վլադիմիր Գրիգորյանի և Արայիկ Ղազարյանի դատական նիստի օրվա և ժամի մասին պատշաճ ծանուցման փաստը հավաստող

համապատասխան անդորրագրեր Դատարանի մոտ առկա չեն եղել Որոշումը կայացնելու պահին, *ինչը հաստատվում է Դիմողի «Դատական սանկցիա կիրառելու մասին» 11.05.2017թ-ի որոշմամբ և Պատասխանողներից Կարեն Հովհաննիսյանի բացատրությամբ:*

6. 2017թ-ի մայիսի 11-ին՝ մինչ դատական նիստը սկսվելը՝ ժամը 14:30-ից մինչև 14:40-ի սահմաններում Դատարանի գրասենյակ է ստացվել ամբաստանյալ Իշխան Բարսեղյանի պաշտպաններ Լիանա Գրիգորյանի, Կարեն Հովհաննիսյանի, Կարեն Ղազարյանի կողմից ստորագրված դիմում՝ հետևյալ բովանդակությամբ. «Դատարանի վարույթում քննվող թիվ ԵՇԴ/0165/01/16 քրեական գործով հերթական դատական նիստը նշանակվել է 2017թ-ի մայիսի 11-ին, ժամը 15:00-ին: Հարգելի դատարան, պաշտպան Վարդուհի Էլբակյանը 10.05.2017թ-ին վիրահատվել է՝ սուր քարային ֆլեգմոնոզ խոլեցիստիտ, լեղապարկի էմպիեմա ախտորոշումով և ներկայումս ստացիոնար բուժում է ստանում «Էրեբունի» ԲԿ-ի լապորոսկոպիկ վիրաբուժության բաժանմունքում, իսկ ներքստորագրող պաշտպաններս, նաև պաշտպաններ Արա Ղազարյանը, Վլադիմիր Գրիգորյանն այլ զբաղվածության պատճառով չենք կարող ներկայանալ հիշյալ օրը նշանակված դատական նիստին: Հայցելով դատարանի և դատավարության մասնակիցների ներողամտությունը՝ խնդրում ենք մեր բացակայությունը համարել հարգելի, հետաձգել դատական նիստը և նշանակել մեկ այլ հերթ: Կից ներկայացնում ենք Վարդուհի Էլբակյանի վերաբերյալ «Էրեբունի» ԲԿ-ի տված տեղեկանքի լուսապատճենը: Հարգանքով՝ պաշտպաններ՝ ստորագրություններ Կ. Հովհաննիսյան, Լ. Գրիգորյան, Կ. Ղազարյան», *ինչը հաստատվում է Դիմողի «Դատական սանկցիա կիրառելու մասին» 11.05.2017թ-ի որոշմամբ և Պատասխանողներից Կարեն Հովհաննիսյանի բացատրությամբ:*

6. Պատասխանողների անձր բնութագրող հանգամանքները.

ՀՀ փաստաբանների պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից 28.09.2017թ. տրամադրված տեղեկանքի համաձայն՝ Պատասխանողներից Կարեն Հենրիկի Հովհաննիսյանը փաստաբան է հանդիսանում 02.05.2012թ-ից: 2012-2017թթ. ընկած ժամանակահատվածում վերջինիս նկատմամբ կարգապահական վարույթ չի հարուցվել:

ՀՀ փաստաբանների պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից 28.09.2017թ. տրամադրված տեղեկանքի համաձայն՝ Պատասխանողներից Կարեն Ղազարյանը փաստաբան է հանդիսանում 19.10.2007թ-ից: 2007-2017թթ. ընկած ժամանակահատվածում վերջինիս նկատմամբ 6 անգամ հարուցվել է կարգապահական վարույթ (6 ավարտված վարույթ):

Տեղեկանքին կից ներկայացված հավելվածի համաձայն՝ 6 ավարտված վարույթները կարճվել են՝ արտոնություն կիրառելու հիմքով:

ՀՀ փաստաբանների պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից 28.09.2017թ. տրամադրված տեղեկանքի համաձայն՝ Պատասխանողներից Լիանա

Գրիգորյանը փաստաբան է հանդիսանում 24.10.2009թ-ից: 2009-2017թթ. ընկած ժամանակահատվածում վերջինիս նկատմամբ 8 անգամ հարուցվել է կարգապահական վարույթ (7 ավարտված և 1 ընթացիկ վարույթ):

Տեղեկանքին կից ներկայացված հավելվածի համաձայն՝ 7 ավարտված վարույթներից 2-ով վարույթները կարճվել են, չորսով՝ փաստաբանի նկատմամբ կիրառված տույժերը արդեն իսկ մարվել են, իսկ մեկով՝ փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին որոշմամբ սահմանված տույժը դեռևս ուժի մեջ չի մտել:

7. Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.

Գնահատելով գործում առկա ապացույցները, Խորհուրդը գտնում է, որ փաստաբաններ Լիանա Գրիգորյանի, Կարեն Հովհաննիսյանի և Կարեն Ղազարյանի նկատմամբ 05.06.2017 թվականին հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման հետևյալ պատճառաբանությամբ:

Կանոնագրքի 4.1 կետի համաձայն՝ Փաստաբանը, ով ներկայանում է կամ մասնակցում է գործին դատարանի կամ արբիտրաժային տրիբունալի առջև, պետք է ենթարկվի այդ դատարանի կամ տրիբունալի կողմից կիրառվող վարվելակերպի կանոններին, այդ թվում հարգանքով վերաբերվել դատավորին և դատավարության մյուս մասնակիցներին: Այդ կանոններին ենթարկվելու պարտականությունը չի սահմանափակում փաստաբանի՝ դատավորի կամ արբիտրի գործողությունների դեմ առարկելու կամ այլ դատավարական իրավունքներից օգտվելու հնարավորությունը: Փաստաբանը դատարանի հանդեպ ճշգրիտ հարգանք և համակրանք դրսևորելու հետ միաժամանակ պետք է իր վստահորդի շահերը պաշտպանի անկաշկանդ և անվախ՝ հաշվի չառնելով իր անձնական շահերը կամ ցանկացած հետևանքները, որոնք կպատահեն իր կամ ցանկացած այլ անձի հետ:

Խորհուրդը գտնում է, որ սույն գործով պարզման ենթակա է հետևյալ հարցը.

1. Արդյո՞ք Պատասխանողների գործողություններում առկա է Կանոնագրքի 4.1-րդ հոդվածի խախտում, այն է՝ արդյո՞ք Պատասխանողները դատական նիստին չներկայանալով իրենց դատավարական իրավունքներից օգտվել են անբարեխղճորեն և անհարգելի չեն կատարել իրենց դատավարական պարտականությունները՝ չարամտորեն խուսափելով դատարան ներկայանալուց, և նպատակ ունենալով ձախողել գործի քննությունը՝ դրանով իսկ անհարգալից վերաբերմունք դրսևորելով դատարանի և դատավարության մասնակիցների նկատմամբ:

Խորհուրդը գտնում է, որ «դատարան ներկայանալուց չարամտորեն խուսափելու» եզրույթը ենթադրում է առանց հարգելի պատճառի իր դատավարական պարտականությունների շարունակական չկատարումը, ուստի այն պետք է գահատվի անձի ընդհանուր գործողությունների համատեքստում. այս առումով էական նշանակություն ունի անձի կողմից նույն գործով դրսևորած վարքագիծը:

Տվյալ դեպքում, Խորհուրդը հաստատված է համարել այն հանգամանքը, որ Պատասխանողները դատական նիստին չեն ներկայացել, ինչպես նաև այն, որ դատական նիստից առաջ իրենց չներկայանալու մասին զգուշացրել են դատարանին՝ հայցելով թե դատարանի, թե դատավարության մասնակիցների ներողամտությունը:

Ավելին, Խորհուրդը հաստատված է համարել նաև այն, որ Պատասխանողներն առաջին անգամ չեն ներկայացել դատական նիստին՝ մինչ այդ տեղի ունեցած ոչ մի նիստ չի հետաձգվել վերջիններիս բացակայության հիմքով կամ վերջիններիս նախաձեռնությամբ որևէ այլ հիմքով:

Փաստորեն, գործում առկա ապացույցներից չի բխում, որ Պատասխանողները, չներկայանալով դատական նիստին, նպատակ են ունեցել անհարգալի վերաբերմունք դրսևորել դատարանի կամ դատավարության մասնակիցների նկատմամբ, և չարամտորեն խուսափել են դատարան ներկայանալուց՝ գործի քննությունը ձախողելու նպատակով:

Նման պայմաններում Խորհուրդը գտնում է, որ Պատասխանողների կողմից Կանոնագրքի 4.1 կետի պահանջի խախտում թույլ տալու փաստը սույն գործով չի հիմնավորվել, ուստի վերջիններիս նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 14-րդ կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7- րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի, 39.8-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության 16.26-րդ կետի, Կարգի 28-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 30-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի պահանջներով Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Փաստաբաններ Լիանա Գրիգորյանի (փաստաբանական գործունեության արտոնագիր № 892), Կարեն Հովհաննիսյանի (փաստաբանական գործունեության արտոնագիր № 1352) և Կարեն Ղազարյանի (փաստաբանական գործունեության արտոնագիր № 1358) նկատմամբ «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» 4.1 կետի պահանջների խախտման հիմքով հարուցված թիվ 17030 կարգապահական վարույթը կարճել:

2. Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

Ծանոթություն. *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետը լրանալուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝

Կարեն Սարգսյան